



Holy Trinity Armenian Church

14 Woodlawn Avenue West, Toronto 7, Ontario - 923-0081

Jirayr Tashjian Pastor

ՅուՆուար 27, 1971

Գերաշնորհ

Տ.Թորգոմ Ս.Արք. Մանուկեան

Բարեխնամ Առաջնորդ Հայոց Հիւս.Ամերիկայի

Նիւ Եորք, Ն.Ե.

Սրբազան Հայր,

Հաւատարմական լաւագոյն սիրով ու խոր երախտագիտութեամբ այսու կու գանք պաշտօնապէս հաղորդելու թէ Թորոնթոյի Հայոց Ս.Երրորդութիւն եկեղեցւոյ Տարեկան Ժխական Ժողովը տեղի ունեցաւ մեր նախագահութեամբ Կիրակի Յունուար 24, 1971 կէսօրէ ետք ժամը 3.30ին, Ատենապետութեամբ Տիար Կարօ Գավուքեանի:

Ժխական Ժողովը իր օրինաւոր նիստին 71 ժխական անդամներու ներկայութեան լսեց ժխական խորհուրդի եւ յարակից մարմիններու տարեկան տեղեկատուութիւնները, եւ հաստատեց ժխական խորհուրդի կողմէ ներկայացուած 1971 տարւոյ պիւտճէի նախահաշիւը, հոգեւոր հովիւի տարեկան թօշակին վրայ 10 առ հարիւր յաւելումով: Ժխական խորհուրդի եւ յարակից մարմիններու ելեւմտական հաշուետուութիւնները միաձուլելու համար միաձայնութեամբ ընտրեց եկեղեցւոյ անդամ Պարոն Արմենակ Մարգարեանը իբրեւ եկեղեցւոյ հաշուապահ կամաւոր ծառայութեան: Կատարեց նաեւ ժխական խորհուրդի հինգ ղաղարեալ անդամներու փոխարէն նորերու ընտրութիւնը, քուէից առաւելագոյն կարգով ներկայացնելէ ետք անոնց անունները, խոնարհաբար կը խնդրենք Ձեր Սրբազնութեան պաշտօնական վաւերացումը, Ձեր միջոցաւ հրաւիրելու գիրենք ժխական խորհուրդի անդամացիութեան յառաջիկայ երկու տարիներու համար.-

Տիարք	Պարգեւ Խոճաճեան	62	քուէ
	Ղեւոնդ Խոսրովեան	56	,,
	Ստեփան Սեմերճեան	54	,,
	Յարութիւն Արթինեան	50	,,
	Եղուարդ Տէօվլէթեան	41	,,

Համեցէք ներփակ գտնել Հովուական Ձեկոյցը, ժխական խորհուրդի Ատենապետին լրիւ տեղեկատուութիւնը եկեղեցւոյ յարակից մարմիններու տեղեկատուութիւնները ինչպէս նաեւ Առաջնորդարանիդ հարցարանը ամբողջացած:





Holy Trinity Armenian Church

14 Woodlawn Avenue West, Toronto 7, Ontario – 923-0081

Jirayr Tashjian *Pastor*

1971 տարւոյ ընթացքին լիայոյս ենք ապահովելու Ձեր շնորհաբեր
այցելութեան, կանխաւ առաջարկելով Դեկտեմբեր 5, 1971 եկեղեցւոյս 18րդ
տարեդարձի հանդիսութեանց:

Յաջողութեան եւ առողջութեան լաւագոյն մաղթանքներով մնամ
ի համբոյր սրբազնութեանդ Ս. Աջոյն

Որդիական անկեղծ սիրով

խոնարհաբար

Աղօթակից՝

Jirayr Tashjian
Ժիրայր Վրդ. Թաշճեան
Հովիւ

Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ
Թորոնթօ, Գանատա

